Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

3429

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏ. ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ. № 18

# ՅԵՐԵՔ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

A 1/7980

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

20114

ԻՆՍՑԵՆԻՐՈՎԿԱ

ԵՐԵՎԱՆ
ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
1925

Գրաւ. № 2076 Պատ. № 3001 Տիրաժ 500

## ՅԵՐԵՔ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

*Բեմի աջակողմում սև կտորով ծածկված մի պատվանդան. վրան գրված է՝ «Կապիտալ»։ Պատվանդանի վրա կանգնած (կամ նստած) է բուրժուան՝ հպարտ կեցվածքով. ձեռքին ունի սև դրոշակ՝ փաշիստական նշանով, կրծքին մեդալյոն՝ նույնպիսի նշանով։*

*Ձախակողմում յերկրորդ պատվանդանը, վոր ծածկված է կարմիր կտորով և վրան գրված է՝ «Աշխատանք»։ Այս պատվանդանի վրա նստած (կամ կանգնած) է բանվորը՝ կարմիր դրոշը ձեռքին։*

*Բուրժուան և բանվորը շարժումներ չեն անում՝ նրանք միայն համապատասխան գաղափարների խորհրդանշաններն են. գործում են դիմախաղով, ժեսթերով և խոսելով։*

### ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

1. Բուրժուա (Կապիտալ)
2. Բանվոր (Աշխատանք)
3. I-ին Ինտերնացիոնալ
4. II-րդ Ինտերնացիոնալ
5. III-րդ Ինտերնացիոնալ
6. Ոժանդակ ուժեր։

ԲԱՆՎՈՐ— Յերկրագնդի վրա պայքարում են սևն ու կարմիրը։ Սևն իշխելու անհագ ծարավն ունի. [illegible] յե նրա ուժն ու զորությունը։ Նա դաժան է, ագահ ու չար. տարածել է յերկրի վրա իր սև թե-

վերն ու սարսափի, տանկերի շղթաներով կապել է ամեն ինչ։ Նա աշխատում է այնպես անել, վոր ամենքն իրեն յենթարկվեն։ Բոլորն աշխատեն և միայն ինքն ուտի, վայելի։ Յերկաթի ու գնդակի միջոցով ստրկացնելով վողջ մարդկությունը, արյան բաղնիքներում խեղդելով ազատության ամեն մի փորձ՝ նա նույնիսկ աստծուն լոկ նրա համար է ստեղծել, վորպեսզի այդ աստվածն իր զորությամբ նույն սև իշխանությունը հաստատի մարդկանց մեջ։ Այդ սև ուժի անունը ձեզ հայտնի յե. դա՝ կապիտալն է։

Նրա դեմ կռվում է կարմիրը։ Անհիշելի ժամանակներից նա ճնշվածների սրտերում ազատության և յերջանիկ կյանքի ալ հուրն է վառել։

Բոցավառ է այն հուրը միլլիոնավոր ստրուկների սրտերում, ջերմորեն գրկել է նա խավար ու խեղճ, ցուրտ յերկրագունդը յերջանիկ կյանքի մեծ կրակով։ Յեվ աճում ու ամրանում է այդ ուժի կրող ու բուրժուազիայի գերեզմանափոր բանվորը։

Ֆրանսիացի, գերմանացի, անգլիացի, հնդիկ, պարսիկ, չինացի և նեգր բանվորները— բոլորն անխտիր թփրտում են կեղեքման յերկաթե կապանքներում։ Բանվորները հայրենիք չունեն—նրանց հայրենիքն ամբողջ աշխարհն է. բանվորներն ազգություն չունեն—նրանց ազգությունը հարստահարված ճնշված աշխատավորությունն է. բանվորները կրոն չունեն—նրանց կրոնը հեղափոխությունն է։ Յեվ ծավալվում է նրանց ուժը յերկրե-յերկիր ու նրանց պաշտպանը մարտիկների նորանոր խմբեր է ծնածում՝ համաշխարհային վերջին ճակատամարտի համար-

(Նվագախումբը «Ինտերնացիոնալ» է նվագում. Խմբը ձայնակցում է նրան)։

Առաջին անգամ իր գիտակցության վկայականը ստանում է նա Մարքսի ու Էնգելսի ձեռքով 1848 թվին։

Առաջին անգամ միջազգայնորեն կազմակերպվում է 1864 թվին՝ Առաջին Ինտերնացիոնալի շուրջը։

Առաջին անգամ իր զորեղ բազուկն է բարձրացնում կապիտալի դեմ 1870 թվին։

(Հանդես է գալիս I-ին Ինտերնացիոնալը՝ կրծքին կարմիր ժապավեն և ժապավենի վրա՝ «1864 թ.— I-ին Ինտերնացիոնալ» մակագրությունը)։

ԲՈՒՐԺՈՒԱ— (Ցուրովի)

Ուրվականն է կոմունիզմի
Եվրոպայում շրջում.
նոր պայքարի, պատերազմի
փողն է հեռվից հնչում։
Նրա տեսքն ինչ ահարկու,
ինչ զորեղ է բռունցքը.
գործարանի փուքս է կուրծքը,
հոգեառն է իմ հոգու։
Պետք է գործ ու զենք կուտակել,
պետք է խեղդել ուժն այդ.
կրակը կայծից է սկիզբը առել,
ծովը՝ շիթից անհայտ։

## I-ԻՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Պրոլետարներ բոլոր յերկրների, լսեք.
Սրտի կանչն եմ յես ձեր՝ յելեք, յելեք, յելեք։
Հազար միլիոն ձեռքեր, ազատատենչ սրտեր,

ճնշվածներ ու խեղճեր—ում կարիքն է խեղդել.
մի սիրտ, մի կյանք, մի կամք և մի հողի դասա՝
բուրժուայի դեմ՝ ելեք. ելե՛ք, ելե՛ք, ելե՛ք։
Ելեք դաշտերն ամեն, հրոսապարտակները բյուր,
փողոցները, ելեք, գործի վայրերը լուռ.
պալատները դեպի դարձրեք դարկը ձեր ալինդ,
տապալենք բռնության գահը նենգ ու անխիղճ.
Կոմունիզմի բոսոր վայլը աշխարհով մեկ
յերջանկորեն փռենք—ելե՛ք, ելե՛ք, ելե՛ք։

ԲՈՐԺՈՒԱ.—Վատ է զարթնել այս թռչնակը.
բայց վէլ ու զոռ է խոսում.
յեկեք կարենք լեզուն խոսուն—
լուրջ չդառնա կատակը։
Փարիզի կոմունան,
վոր անհաղթ եր թվում,
ավլի սրի բերան—
արյան մեջ է լողում։
Սա ձիլ է, վոր ուժեր
դիմանալ կարենա.
Ո՛չ, լակը, կառուժեա,
խարասու մի մոռանա։

(Եսմի հետևը զենքի շրխկոց ու շառաչ։ I Ինտեր-նացիոնալը ծունկի յե իջնում)։

I-ԻՆ ԻՆՏԵՐՆ.—Ընկավ Փարիզի Կոմունան.
խորոխա.

հպարտ գլուխը թեքլեց բուրժուան.
բայց նորից կլինի աշխարհաշրջող,
աշխարհատարած կարմիր կոմունան։
Արդեն փորձեցինք կապիտալի ուժն,

անընկճելի չէ — կը հաղթենք մի օր,
հազարապատկենք, կոփենք մեր ուժը,
կազմենք պայքարի գնդեր նորանոր։

(Հեռանում է ասպարեզից, նվագախումբը թաղման քայլերգ է նվագում)։

ԲՈՒՐԺՈՒԱ — (չարախնդությամբ)

Հմ-հմ-հմ-հմ-հմ.
այս է ձեր ուժն ահա.
մեկեն յերկուսն ընկան,
հենց վոր շարժվեց բուրժուան։

ԲԱՆՎՈՐ — Լավ է ծիծաղում նա, ով վերջինն է ծիծաղում։

Զարկեց եր I-ին Ինտերնացիոնալի կոչը։ Մահվան սարսափ ընկավ բուրժուայի սիրտը։ Կոմունիզմի ուրվականը տեսավ վողջ Յեվրոպայում։

Ատամները կրճտացրեց Կապիտալը, հավաքեց իր սև ուժերը և Փարիզի Կոմունայի հաղթական մարտիկների արյան ծովում խեղդեց պրոլետարիատի միջազգային կազմակերպության գործը։

Որեր անցան. տարիների պես յերկար որեր։ Բանվորները նորից մերձեցան իրար, նորից կազմակերպվեցին։ Ստեղծվեց II-րդ Ինտերնացիոնալը՝ բանվորների նոր միջազգային կազմակերպությունը։ Ու նորից պայքարի դիմեցին։ Մայիսի 1 ի տոնը պրոլետարիատի միջազգային միության խորհրդանշանը դարձավ. բուրժուազիայի գլխին և մահավանդ. գըրպանին նոր հարված հասավ. «8 ժամ աշխատանքի, 8 ժամ քնի, 8 ժամ ազատ զբաղմունքի» լոզունգը հնչեց։

*(Մոլոսկյեղի նվագի տակ բեմ է մանում II-րդ Ինտերնացիոնալը — յերկու բանվորներ, վորոնք յերկու փայտերի վրա պլակատի ձեվ դրոշ են կրում։ Դրոշակի կեսը կարմիր է, կեսը դեղին։ Նրանք այնպես են միացված, վոր դրոշակակիրներն ուզած րոպեյին կարող են բաժանել իրարից)։*

II-րդ ԻՆՏԵՐՆ.—Բուրժուան չի յել իմանա, թե յերբ է հնչելու ռազմի փողը, իսկ մենք, յեկել ենք ինչպես առաջին Ինտերնացիոնալը և նրա պես կանչում ենք ձեզ։

Հազար միլլիոն ձեռքեր, ազատատենչ սրտեր,
ճնշվածներ ու խեղճեր—ում կարիքն է խեղդել,
մի սիրտ, մի կյանք, մի կամք և մի հոգի դառած
բուրժուայի դեմ յելեք. յելեք, յելեք, յելեք։

ԲՈՒՐԺՈՒԱ.—Մարքսի խոսքերը ճշտությամբ կատարվեցին. սրանց զենքով, զորքով դժվար է կռովել։ Արի մի փորձ փորձենք, խաբեյության ու կաշառքի դիմենք։

*(Յերկու սերտուկավորներ՝ «Պատերազմ, 1914 թ.» մակագրությամբ սև պլակատ են պարզում։ Բուրժուան դիմախաղով II-րդ Ինտերնացիոնալի դրոշի դեղին կտորի կողմը կանգնածին է դիմում, կաշառ տալու ձեվեր անելով)։*

Յես կտամ քեզ մեծ դիրք,
պաշտոն մինիստրի,
դրամ, չարազ ու միրգ,
կեր, միայն թե լռի։

II-ՐԴ ԻՆՏԵՐՆ.— *(Համաձայնողականը քաշում է դրոշի դեղին մասը, պոկում է նետում է դեպի բուրժուան. հանում է բանվորական բլուզը, ֆրակ*

ու ցիլինդր է հագնում, կրծքին կպցնում է մի պլակատ, վորի վրա գրված է՝ «2+2½=2-ից»։ II Ինտ. դրոշի մյուս մասը (կարմիրը) բռնած բանվորը մոտենում է գործող բանվորին. «III-րդ Ինտերնացիոնալ կամ Կոմինտերն» պլակատն են բարձրացնում)։

ԲԱՆՎՈՐԸ—Որեր անցան։ II-րդ Ինտերնացիոնալը կազմակերպեց բանվորներին։ Բայց վրա հասավ 1914 թվի համաշխարհային պատերազմը։ Միլիոնավոր բանվորներ պատերազմի դաշտը քշվեցին՝ կապիտալի շահերը պաշտպանելու. պատերազմին պատերազմ հայտարարելու փոխարեն՝ II Ինտերն. պարագլուխները դավաճանեցին պրոլետարիատին, մոռացան նրա դասը, նվիրագործեցին արյունալի սպանդը և բուրժուազիայի պոչը բռնեցին։

Պայքարի կարմիր դրոշն իր ձեռքն առավ Կոմինտերնը և պրոլետարներին դեպի վերջին ու վճռական կռիվ է առաջնորդում։

(Նվագախումբն «Ինտերնացիոնալ» է նվագում։ Պատվանդանի վրա կանգնած բանվորը և II-րդ Ինտերնացիոնալից անջատվածը ձեռք-ձեռքի յեն տալիս և հանդես են գալիս, վորպես միացյալ ուժ՝ Կոմինտերն)։

ԿՈՄԻՆՏԵՐՆ—Կորչի պատերազմը—կանչում ենք
մենք հիմա,—
կեցցե՛ վեհ պայքարը ընդդեմ կապիտալի.
մերն է հաղթությունը—մենք անվախ ենք,
անահ.
կործե՛ք թուլամորթներ, կոմունան է գալիս։

II-ՐԴ ԻՆՏ.——Խենթ են սրանք, ով կերթա
ես խենթերի հետ.

տեղըս տար և հիմա—
ինչու դառնամ չեմ
Գլուխս անցավ ինչու գնեմ·
ծանր հոգսի տակ,
յերբ բուրժուան խոստանում·
և թե փառք, թե թագ,

ԲՈՒՐԺՈՒԱ.— (Յուրովի) Սրան լավ ճանկեցի. հիմա թե կարիք լինի 2-ն ու 3-ը կը կռվացնեմ իրար հետ,—թե մեկը կթուլանա, թե մյուսը։ Իսկ մեջտեղն իմ բանը կհաջողվի։ (II-րդ Ինտերնացիոնալին):

Ե՜յ, բարեկամ, տես քեզ ինչ փառք ու պատիվ տվեցի, ինչպես փորդ ու աչքդ լցացի։ Հիմա հերթը քոնն է. հավաքիր քո զորքն ու բանակը՝ ես խենթ կոմինտերնին մի լավ խրատ տանք։ Գիտես, վոր պարտքերդ տակը չեմ մնա, լավ կվարձատրեմ։ Գնա, քեզ տեսնեմ։

(Սերթուկավորները 2-րդ Ինտերնացիոնալին վոսկե թագ ու ծիրանի յեն ցույց տալիս)։

II-ՐԴ ԻՆՏ.—(Վողևորված, յուրովի.) Ա՜հ, տեսնես յերազ է, թե իրականություն։ Թագ և արքայական ծիրանի յել են խոստանում։ Պետք է կարգի հրավիրել էդ կապը կտրած կոմունիստներին։

(III-րդ Ինտերնացիոնալին դառնալով)

Ե՜հ, ընկեր սիրելի, թե մասսայի կողմն ես,
դասակարգիդ կռիվը լավ կանես, վոր թողնես.
մեկ է, մենք չենք կարող ապրել անկապիտալ.
Նրան տանք տասը չերեփ, իսկ մեզ՝ մի-մի
գդալ։

ԿՈՄԻՆՏԵՐՆ— Դավաճան համաձայնողական,

բավական է, բավական է։ Ջե՞ս տեսնում, վոր քեզ գործիք են դարձել՝ մեր դեմ կռվելու համար։ Ո՞ւմ կարող ես խաբել։ Տես, I-ին Ինտերնացիոնալի, Մարքսի ու Էնգելսի լավագույն ավանդապահ Լենինը՞ կոմունիզմի կարմիր դրոշն է պարզել։ Բանվորներն էլ չեն հավատում քեզ. բանվորները հեռանում են քեզանից, մեր շարքերն են գալիս։

Ծովածավալ Խորհրդային Միությունն է ստեղծվել նախկին ցարական Ռուսաստանի փլատակների վրա. որ-որի վրա ամրանում ու զորեղանում է նա, համաշխարհային հեղափոխության այդ միջնաբերդը, որ-որի վրա նրա ազդեցությունն ավելի յե մեծանում համայն աշխարհի բոլոր ճնշվածների մեջ։

Յեվս մի վերջին լարում, ես մի վերջին հարված՝ և կապիտալի շենքը փուլ կգա, իր փլատակների տակ՝ քեզ և քո հովանավորին թաղելով։

Ուշքի յեկ, քանի ուշ չե և յեթե չես կարող ոգնել, գոնե մի կասեցնի աշխատանքի հաղթական ընթացքը։

ԲՈԻՐԺՈԻԱ.—Այսպիսի յոլ վտանգավոր կազմակերպությու՞ն։ Ա՛հ, միթե փրկության ճար չկա։

ԲԱՆՎՈՐ—Չի յեղել, չկա, չիլինի...

Դոռ գալիքի խրոխտ ամպրոպն է ճայթում։
ժամանակի ալիքներն են հոխորտում։
բայց որերի ղեկն առել ձեռքն իր ամուր՝
կոմունիզմի նավն է վարում Մոսկվան կուռ։
Բանվորների հաղարմիլլիոն բռունցքներ
բարձրանում են, փշրում շղթան բռնության.
կյանքը փոխվում, փոխում է և առանցքն իր.
Թույլ են թվում գալիքի դեմ տարերքները
բնության։

Բուրժուայքին մահվան սարսափն և բանվ[illegible]
դողդողում և ահից գալիք փոթորկի.
վերջին մարտի հսկա հուրն է բռնկել
վերջն է հասել կապիտալի աշխարհքի։
(Կոմինտերնին դառնալով)

Դու զենքավարն ես մեր ահեղ պայքարի,
հասիր, դողա թող բուրժուան քո առաջ
մեր զարկերը քանի կան՝ չեն դադարի,
կուժեղանա զենքի շրխկոցն ու շառաչ։

ԿՈՄԻՆՏԵՐՆ.—Զիլ յերգերը կարկաչում են, լսեք
լսեք, լսեք.
ամեն կողմից մեզ կանչում են՝ հասեք, հասեք, հասեք.
մենք ձեզ հետ ենք, մենք նույն ուժն ենք—
յելեք, յելեք, յելեք.
Թշնամու դիրքերը խուժենք՝—ի զեն, ի
զեն, ի զեն։
(Նվագախումբը «Ինտերնացիոնալ» է նվագում)։

ՎԵՐՋ

Փոխադրեց՝ Ս. Խոնդկարյան

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0044705

[034]

A 1/7981

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

Դիմել՝ Յերևան Հ. Ս. Մ. Խ. Կուլտ-բաժին։